ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆՆԵՐ ՓԲԸ

ՀՎՀՀ 02583292

Հեռ. 077352101

ՀՀ Շրջակա միջավայրի նախարար

Պարոն Հ. Սիմիդյանին

<<Ղարագուլյաններ>> ՓԲԸ

Տնօրեն՝ Վ.Վարդանյանից

17.02.2023թ

N 23/02

ք.Երևան

Հարգելի պարոն նախարար,

Ի կատարումն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 19-րդ կետով նախատեսված պահանջների Ձեզ եմ ներկայացնում թիվ ՇԱԹ-29/547 թույլտվության և ընդրեքօգտագործման թիվ 547 պայմանագրի հիման վրա ՀՀ Սյունիքի մարզի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի Կենտրոնական տեղամասի շահագործմանը պահանջվող ստորգետնյա հանքի բացման անհրաժեշտ լեռնակապիտալ օգտակար հանածոների արդյունահանմանը նախապատրաստվելու ուղղությամբ ընկերության կողմից կատարված աշխատանքների հետ կապված ընդերքօգագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման,անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ԲՓ-87 եզրակացությամբ ընդունված ՇՄԱԳ հաշվետվությամբ պլանավորված մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ հաղորդումը:

Տեղյակ եմ պահում, որ ընկերությունը անցած տարիներին հնարավորություն չի ունեցել լայնածավալ լեռնակապիտալ և նախապատրաստական աշխատանքներ կատարել կենտրոնական տեղամասի ստորգետնյա հանքի շահագործման և նախապատրաստման համար, կապված ՀՀ համապատասխան իրավասու մարմինների կողմից ընկերության տրամադրված լեռնահատկացման սահմաններում ընդգրկվող հողամասերի վարձակալության և հողի նպատակային նշանակության փոփոխության ձգձգումների հետ: Դրանք ձգձգվել են կապված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման պետական միջգերատեսչական հանձնաժողովի անդամ հանդիսացող գերատեսչությունների կարծիքների: Խնդրո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 3686
«20» 02 2023 թ.

առարկա հողամասերի նպատակային նշանակության փոփոխության խնդրին ավելի ուշ անդրադառնալու պատճառաբանությամբ: Պատճառաբանություն է բերվել հանքի տարածքին սահմանակից գոտիներում ճանապարհների և այլ կոմունիկացիոն օբյեկտների հետ կապված քարտեզագրման և հետազոտական այլ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը:

Այդուհանդերձ, քանի որ <<Ղարագուլյաններ>> ՓԲԸ-ն նախապատրաստական աշխատանքներ է տանում նաև ֆինանսական, տեխնիկական և իրավական պահանջներից ելնելով պատրաստ լինելու առաջիկայում վերևում թվարկված խոչընդոտները հաղթահարելուց հետո անմիջապես ձեռնամուխ լինելու ստորգետնյա հանքի նախապատրաստմանը անհրաժեշտ լեռնակապիտալ և կտրման աշխատանքների անցմանը, իսկ ներդրումների ներգրավման հիմնավորումները պահանջում են բազմակողմանի ուսումնասիրված և ժամանակային առումով նոր փաստարկված տվյալներ, տեղամասի արդյունաբերական նշանակության, դրա յուրացման հեռանկարների ճիշտ ներկայացման համար, անհրաժեշտություն է առաջացել կատարելու որոշակի շահագործական հետախուզական աշխատանքներ:

Բացի այդ, հանքի շահագործմանը անհրաժեշտ առաջին իսկ ստորգետնյա լեռնային փորվածքների անցմանը զուգահեռ կառաջանա նաև ուղեկցող հանքաքար և դրա իրացման կազմակերպմանը նույնպես անհրաժեշտ կլինեն նախապատրաստական աշխատանքները-բանակցություններ պոտենցիալ գնորդի, հանքաքարի որակական և ստրուկտուրային կազմի նրա վերամշակման, տեխնոլոգիայի ընտրության, հանքաքարից մետաղների կորզման ցուցանիշների վերաբերյալ: Հենց այս անհրաժեշտությունից ելնելով 2022 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընկերությունը տեղամասում նախկինում անցած N 1 հանքուղուց (հորիզոն 1943,4 մ) անցած հանքային շտրեկում որպես շահագործական հետախուզական աշխատանքներ կատարել է ակոսային նմուշարկում 10 սմ x 5 սմ չափերով, հանքային շտրեկի առաստաղից 0,0 – 11,0 մ միջակայքում 7 ժապավենով, 2,5 – 3,0 մ երկարության նմուշարկում, ընդամենը 300 կգ քաշով:

Վերցված նմուշների մի մասը անալիզի է ենթարկվել <<Լեռնամետալուրգիայի Ինստիտուտ>>, մյուս մասը, որպես հսկողական նշանակության անալիզներ՝ <<Անալիտիկ>> ՓԲԸ-ների համապատասխան հավատարմագրեր ունեցող լաբորատորիաներում:

Վերցված նմուշների միջին պարունակությունները կազմել են ոսկի – 4,54 գր/տ, արծաթ – 42,55 գր / տ, պղինձ – 0,056% , ցինկ – 3,337%, կապար – 1,905 %:

Հանքային շտրեկի առաստաղից վերցված նմուշների լաբորատորիաներում կատարած վերամշակումների ընթացքում իրականացված կրճատումներից ստացված

մնացորդը և որպես կրկնօրինակ թողնված մշակված նմուշանյութն պահվում է որպես միներալատեխնոլոգիական նմուշ առաջիկայում Կապանի լեռնահանքային կոմբինատին հարստացուցիչ ֆաբրիկայի տեխնոլոգիական լաբորատորիայում ֆլոտացիոն եղանակով հարստացման սխեմա մշակելու համար:

Տեղամասի հանքային շտրեկից ակոսային եղանակով վերցված նմուշը ամբողջությամբ վերցվել է Կենտրոնական տեղամասի հաստատված C2 կարգի պաշարներում ներգրավված N 1/ հանքային մարմնից և դրանք բնապահպանական որևիցէ կորուստ և անվերադարձ ազդեցություն չեն առաջացրել, իսկ նմուշարկման արդյունքներում օգտակար հանածոների հաշվեկշռային պաշարների չնչին շարժի մասին հաշվետվություն է ներկայացվել լիազոր մարմին՝ Հանրապետական երկրաբանական ֆոնդին:

Չնայած ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների անվերադարձ ազդեցության բացակայությանը Ղարագուլյաններ ՓԲԸ-ն ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2022 թվականին ժամանակին կատարել է Վերին Վարդանիձորի հանքավայրի Կենտրոնական տեղամասի ստորգետնյա հանքի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պետական փորձաքննության ընդունված հաշվետվությամբ նախատեսված հանքավայրի մշտադիտարկման դրամագլխի ընթացիկ վճարը՝ 233,511 ՀՀ դրամի չափով, հանքի փակման մշտադիտարկման վճար՝ 115,577 ՀՀ դրամ, ինչպես նաև Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սոցիալական աջակցության վճար՝ 1,250,000 ՀՀ դրամի չափով:

Տնօրեն _____ Վ.Վարդանյան

ք. Երևան Դեկտեմբեր 15

mikayel1988@mail.ru